Մինարեթի ներսը լուսաւորուած էր փայտակոյտ խարոյկով, որ վառ-ւում էր յատակի մէջտեղում, տարածելով իր կ'արմիր-ծիրանի լոյսը խուլ գմ-բէթների մէջ: Կրակի մօտ երկու հոգի միս էին խորովում, որ շարած էր հրա-ցանի սումբաների վրայ, նրանցից ոչ այնքան հեռու դրած էր հաց եւ գինի: Երեք հոգի եւս մի կողմ քաշուած, պառկած էին մերկ գետնի վրայ: Տեսնելով Կարօյին, նրանք մօտեցան, եւ հեռանալով դէպի մինարեթի մթին կողմը, սկ-սեցին անլսելի ձայնով խօսել: Այդ տեւեց աւելի քան տասն րոպէ: Ես մնացի աննկատելի. ոչ ոք ինձ վրայ ուշադրութիւն չէր դարձնում: Այդ բաւական վի-րաւորեց իմ անձնասիրութիւնը: Ես ոչինչ չհասկացայ նրանց խօսակցութիւ-նից, միայն ինձ երեւաց, որ Կարօյի հաղորդածը շատ ուրախալի պէտք է չլի-նէր իր ընկերներին, որովհետեւ իսկոյն նկատեցի նրանց դէմքի վրայ մի խորհրդաւոր տխրութիւն: Ես կարծում էի, թէ խօսակցութիւնը իմ մասին էր:

Երբ վերջացրին, նրանցից գլորիկ հասակով, արագաշարժ մէկը դար-ձաւ դէպի ինձ եւ շիլ-վառվռուն աչքերը ուղղելով իմ երեսին, ասաց.

— Օ-հո՛յ ... դու որտեղի՞ց դուրս ընկար:

Ինձ խիստ անախորժ երեւաց այդ կոպիտ հարցմունքը, եւ ես վրդով-մունքից այնքան շփոթեցայ, որ ոչինչ չգտայ պատասխանելու: Կարօն, կարծես, այժմ մտաբերեց ինձ եւ իմ փոխարէն պատասխանեց.

— Չե՞ս ճանաչում, Սագո-: Հետ դառնալով դէպի միւսնէ կողմերը, ասաց.

— Ա՛խ, ես մոռացայ ներկայացնել տեսէ՛ք, ի՛նչ լաւ հիւր եմ բերել ձեզ համար:

Նա ցոյց տուեց իմ վրայ եւ նրա խօսքերից երեւաց, որ գաղտնի խօսակ-ցութիւնը իմ մասին չէր:

— Ես չեմ ասի թէ ով է, — շարունակեց Կարօն: — Տեսնեմ կը ճանաչէ՞ք:

— Ես նրան ձոի միջում կը ճանաչէի, — խօսեց դարձեալ շիլ աչքերով պատանին, մօտենալով ինձ, — Ֆարհատը չէ՞: Քո տունը չքանդոի, Ֆարհատ, ինչքա՜ն փոխուել ես դու, ի՛նչ լաւ տղայ ես դարձել:

Այս լսելով, միւս ընկերը, որ հետաքրքրութեամբ նայում էր իմ վրայ, գր-կեց ինձ եւ ուրախանալով ասաց.

— Ա՛խ, Ֆարհատն է, ինչպէ՛ս չճանաչեցի ես:

Կարսն ինձ ճանապարհին յայտնել էր, թէ ես կը տեսնեմ իմ երկու ըն-կերներին՝ Ասլանին եւ Սագօյին. այդ պատճառով, դժուար չէր ճանաչել, որ ինձ այնքան սիրով գրկող պատանին Ասլանն էր, իսկ միւս շիլ աչքերովը —